АРПИНЕ ТАДЕВОСЯН

## ПОКАЗАТЕЛИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ СОСТАВ И СТРУКТУРУ ДЕПОЗИТОВ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ АРМЕНИИ

***Ключевые слова:*** *депозиты, коммерческие банки, банковская система, процентные ставки, сбережения.*

*Коммерческие банки являются одной из важнейших отраслей финансовой системы Армении. Для стабильности финансовой системы страны необходимо срочное решение проблем, стоящих перед банковской системой. Одной из приоритетных задач коммерческих банков Армении является привлечение средств и их эффективное распределение. В данной статье описывается состав и структура депозитов, привлеченных коммерческими банками, их характерные показатели и их влияние на последние. В результате исследования были сделаны соответствующие выводы и предложены пути привлечения денежных средств домашних хозяйств в банках.*

ARPINE TADEVOSYAN

## INDICATORS CHARACTERIZING THE COMPOSITION AND STRUCTURE OF DEPOSITS OF ARMENIAN COMMERCIAL BAN

*Key words:* *deposits, commercial banks, banking system, interest rates, savings.*

*Commercial banks are one of the most important sectors in Armenian financial system. Imidiate solution of bank system problems is necessary to keep the stability of country's financial system. One of the priority problems of Armenian commercial banks is to involve deposits and to distribute them effectively. The article describes the structure of involving deposits, characteristic indicators, and factors which affect them. In a result of the research conclusions were made and ways were offered to involve housholds' money in the banks.*

**ՔՐԻՍՏԻՆԵ ԹԱԹՈՍՅԱՆ**
*Զբոսաշրջության կառավարում,*
*բակալավրիատ, 3-րդ կուրս*

## ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Հիմնաբառեր.** *զբոսաշրջության մրցունակություն, ենթակառուցվածք, հենասյուն, գնային մրցունակություն, տնտեսության ճյուղ*

*Համաձայն ՀՀ զբոսաշրջության մրցունակության զեկույցի՝ Հայաստանը մի քանի տարի անընդմեջ բարելավում է իր դիրքերը և շարունակում ակտիվ քաղաքականությունը՝ ուղղված ոլորտում առկա խնդիրների լուծմանը: Անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները, բարելավել ճանապարհները, պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներն ապահովել անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքներով և առավել արդյունավետ օգտագործել: Հարկ է նշել, որ Հայաստանի հասանելիության բարդությունը, հայկական ավիացիայի շուկայի գնային քաղաքականությունը, մարքեթինգի բացերը և հատկապես ճանապարհների ոչ բարվոք վիճակը խոչընդոտում են զբոսաշրջության զարգացմանը:*

Զբոսաշրջությունը Հայաստանի արտահանման երկրորդ խոշորագույն ոլորտն է հանքահումքային արտադրանքի և մետաղների արտահանումից հետո՝ ապահովելով ծառայությունների արտահանման կեսից ավելին: Արդեն մի քանի տարի է՝ ՀՀ Կառավարությունը զբոսաշրջությունը հռչակել է տնտեսության զարգացման գերակա[1] ոլորտներից մեկը: Զբոսաշրջության զարգացման բարձր տեմպեր ապահովելուն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունը ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների կատարելագործումն է, ինչպես նաև առանձին զբոսաշրջային կենտրոնների զարգացման ռազմավարությունների հետևողական իրականացումը:

Արտադրողականության բարձր և մշտապես աճող մակարդակը չի կարող կանխորոշվել պարզապես ռեսուրսներով ապահովվածության հաշվին, այն կապված է երկրի ռեսուրսները և բիզնես միջավայրի գործոնները արդյունավետ տնօրինելու և օգտագործելու ունակության հետ: Վերը նշվածի հիմքում մրցունակությունն է, որը սահմանվում է որպես կազմակերպության, ճյուղի կամ ազգային տնտեսության կարողություն՝ ապահովելու կայուն առաջընթաց, եկամուտների ու աշխատավարձի բարձր մակարդակ, ինչպես նաև բնակչության բարձր կենսամակարդակ[2]:

Սույն հոդվածով փորձ է արվել ներկայացնել ՀՀ 2017 թ. զբոսաշրջության մրցունակության զեկույցը[3], համեմատել աճի/նվազման շարժընթացը 2015 թ. նկատմամբ և իրականացնել համապարփակ վերլուծություն:

Այս համատեքստում անդրադառնանք Համաշխարհային տնտեսական համաժողովի ներկայացրած զբոսաշրջության մրցունակության զեկույցին[4] և Հայաստանի զբոսաշրջության ոլորտի մրցունակությունը դիտարկենք ԱՊՀ և հարևան երկրների համեմատությամբ:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ ներկայացված երկրների շարքում, ինչպես նախորդ տարի, զբոսաշրջության ոլորտում ամենամրցունակ երկիրը Ռուսաստանն է (բարելավել է դիրքը 2 կետով): Իսկ 136 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 84-րդ հորիզոնականը՝ 2015 թ. 89-ի փոխարեն: ԱՊՀ տարածաշրջանի և հարևան երկրների կազմում զգալի առաջընթաց է արձանագրել Ադրբեջանը (13 կետով՝ 71-րդ տեղ) և Տաջիկստանը (12 կետով՝ 107-րդ տեղ): Հատկանշական է, որ Հայաստանն իր զբաղեցրած դիրքով զիջում է հարևան Վրաստանին: Սակայն աճի տեմպը բարձր է Վրաստանի համեմատությամբ: Հայաստանն իր դիրքը բարելավել է ապահովություն և անվտանգություն (47 կետով՝ 34-րդ տեղ), գործարար միջավայր (11 կետով՝ 39-րդ տեղ), մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա (26 կետով՝ 49-րդ տեղ) հենասյունով, ինչը պայմանավորված է ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի և միջոցառումների իրականացումով: Այս առումով կարևոր նշանակություն է ունեցել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նա-

---

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը 2006 թ. զբոսաշրջության զարգացման ծրագրի մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21331:

[2] Տե՛ս http://webcache.googleusercontent.com/search?q=cache:http://media.asue.am/upload/dramashnornhner/Suvaryan.pdf:

[3] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության մրցունակության զեկույց,.http://ev.am/sites/default/files/attachments/pdf/TTCR_Press_Release_2017_Final.pdf:

4 Տե՛ս The Travel and Tourism Competitiveness Report 2017. http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2017_web_0401.pdf:

խարարության կազմում Զբոսաշրջության պետական կոմիտեի[1] ստեղծումը, որը մասնակցում է ներդրումային, արդյունաբերական, զբոսաշրջության և արտահանման խթանման ծրագրերի մշակմանը, ինչպես նաև սահմանված կարգով ներկայացնում է զբոսաշրջության օրենսդրական դաշտի կիրառման փորձի ընդհանրացման, դրա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

Աղյուսակ 1

*Հայաստանի դիրքը՝ ԱՊՀ երկրների և Վրաստանի հետ համեմատած*

**Զբոսաշրջության մրցունակության համաթիվ**

| Երկիրը | Համաթվի արժեքը | Զբաղեցրած դիրքը (136 երկրների շարքում) | Դիրքի փոփոխությունը 2015-2017 թթ. |
|---|---|---|---|
| ՌԴ | 4.15 | 43 | +2 |
| Վրաստան | 3.70 | 70 | +1 |
| Ադրբեջան | 3.70 | 71 | +13 |
| Ղազախստան | 3.59 | 81 | +4 |
| **Հայաստան** | **3.53** | **84** | **+5** |
| Տաջիկստան | 3.18 | 107 | +12 |
| Ղրղզստան | 3.10 | 115 | +1 |
| Մոլդովա | 3.09 | 117 | -6 |

Համաձայն ՀՀ զբոսաշրջության մրցունակության զեկույցի՝ դրական շարժ է նկատվել՝ Հայաստանի հասանելիության հետ կապված, մասնավորապես՝ ՀՀ մուտքի վիզայի[2] տրամադրման ընթացակարգի պարզեցման ուղղությամբ կատարվող աշխատանքներում, ինչպես նաև ՀՀ սահմանային անցակետերում փաստաթղթերի լրացման և մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացմամբ: Հատկանշական է, որ սա բավականին մեծ հնարավորություն է հետագա գործարար կապերի ընդլայնման և, անշուշտ, զբոսաշրջության զարգացման առումով:

Համաձայն գծապատկեր 1-ի տվյալների՝ զբոսաշրջության քաղաքականության և աջակցող պայմանների ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը բարելավվել է զբոսաշրջությանն առաջնայնություն տալու և գնային մրցունակության հենասյուներով:

Սակայն առկա գնային խնդիրները շարունակում են բացասաբար անդրադառնալ ոլորտի զարգացման վրա:

---

[1] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեի խնդիրները և նպատակները, http://stcarmenia.am/без-рубрики/կոմիտեի-մասին/:

[2] Տե՛ս Հայաստան մուտքի վիզայի ռեժիմ, https://www.google.com/amp/s/armenpress.am/arm/amp/694951:




**Գծապատկեր** 1. ***Զբոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ*** *2017* ***թ. գնահատականը և փոփոխությունը*** *2015* ***թ. նկատմամբ***

Համեմատելով Հայաստանի և Վրաստանի զբոսաշրջության ոլորտի գնային քաղաքականությունը, կարելի է փաստել, որ շատերը գերադասում են արտերկիր մեկնել ոչ թե Հայաստանից, այլ մրցակից երկիր Վրաստանից, որտեղ ավիատոմսերը ավելի մատչելի են: Երևանից չվերթների մեծ մասը գիշերային ժամերին են, իսկ ավիատոմսերի գները շարունակում են անշեղորեն աճել: Խնդիրը օդանավակայանի սպասարկման և վառելիքի բարձր գներն են: Առաջիկայում ՀՀ և Եվրոպական միության միջև Համապարփակ օդային փոխադրումների մասին համաձայնագրի ստորագրումը կհանգեցնի ավիատոմսերի գների նվազեցմանը և ծառայությունների որակի բարձրացմանը, ինչպես նաև ոլորտի ազատականացմանը եվրոպական բոլոր ավիափոխադրողների համար:

Ուսումնասիրելով մշակութային ռեսուրսների պահպանության հենասյունը՝ նկատելի է, որ կան բացթողումներ՝ համաշխարհային մշակութային ժառանգության պահպանման և ոչ նյութական մշակույթի պահպանման հետ կապված, վերջինիս դիրքը նվազել է 11 տեղով: Բացի նրանից, որ մեր երկրի մշակութային ժառանգության կեսից ավելին գտնվում է արտերկրում, Հայաստանը պահպանության խնդիր ունի նաև երկրի ներսում: Բացառությամբ այն մշակութային արժեքների, որոնք ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում[1], մեր երկրում կան տասնյակ պատմամշակութային արժեք ներկայացնող կոթողներ, որոնք անկանխատեսելի պատերազմական գործողությունների ժամանակ կարող են թշնամու կողմից հեշտությամբ թիրախավորվել և ոչնչացվել: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է պետական միջամտություն, համապատասխան օրենքների ընդունմամբ պետք է արգելել պատմամշակութային կոթողներին կից ցանկացած օբյեկտի կառուցումը, ինչը կարող է արգելք հանդիսանալ տվյալ հուշարձանի պահպանման և զբոսաշրջության ոլորտի զարգացման առումով: Ինչպես նաև՝ հետագայում կարիք կլինի մշակել օրենքի խախտման համար պատասխանատվության չափ, տուգանք, ընդհուպ մինչև վարչական կալանք, ինչը կնպաստի այս տարածքների՝ որպես զբոսաշրջային կենտրոնների ձևավորմանը, բնապահպանական հետագա խնդիրներից խուսափելուն, նաև հնարա-

[1] Տե՛ս Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկը, https://hy.m.wikipedia.org/wiki/:

վորություն կտա տարածքը մասամբ համապատասխանեցնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում ընդգրկվելու չափանիշներին:

Փաստորեն, զբոսաշրջությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում կարող է դառնալ տնտեսության մյուս ճյուղերի շարժիչ ուժը: Կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է մշակել մարքեթինգային հստակ ռազմավարություն, որը հնարավորություն կտա երկիրը ճանաչելի դարձնել միջազգային շուկայում: Այս առումով տեղին կլինի աշխարհի տարբեր երկրներում հայկական մշակույթին վերաբերող ցուցահանդեսների, փառատոնների կազմակերպումը, ինչպես նաև սփյուռքի հայրենակիցների հետ ակտիվ համագործակցությունը, ինչի շնորհիվ կլուծվի Հայաստանի՝ որպես զբոսաշրջային ներուժ ունեցող երկրի ճանաչելիության խնդիրը:

Հայաստանը, ունենալով էկոտուրիզմի զարգացման հեռանկարներ, ՀՀ բնապահպանության նախարարության աջակցության կարիքն ունի: Սակայն մինչ օրս այդ նախարարության և Տուրիզմի պետական կոմիտեի միջև համագործակցությունն արդյունավետ չէ այնքանով, որ կողմերի միջև չկա հստակ մշակված ռազմավարություն, ակտիվ կերպով չեն իրականացվում երկկողմ ծրագրեր, միջոցառումներ: Ուստի, բնապահպանական խնդիրների, ինչպես նաև բնական ռեսուրսների պահպանության առումով նպատակահարմար կլինի ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծել զբոսաշրջային կենտրոնների պահպանմամբ զբաղվող հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրի Հայաստանի զբոսաշրջային կենտրոնները, բացահայտի և գնահատի տարածքում առկա բնապահպանական խնդիրները և մշակի դրանց լուծմանն ուղղված ծրագրեր: Այս առումով կարելի է զբոսաշրջային կենտրոնները դարձնել հատուկ տարածքներ և օրենքով սահմանված կարգով արգելել գործողությունների իրականացումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տարեցտարի զարգացող զբոսաշրջության ոլորտը դեռ բարելավման կարիք ունի: Այն, որ Հայաստանը զբոսաշրջության ոլորտում դարձել է համեմատաբար մրցունակ երկիր, ակնհայտ է, սակայն այստեղ առկա արտաքին և ներքին խնդիրները պահանջում են վերահսկողություն՝ համապատասխան օրենսդրական դաշտի կիրառմամբ: Ուստի զբոսաշրջությունը զարգացնելու համար պետք է Հայաստանը ճանաչելի դարձնել միջազգային հանրությանը և ստեղծել ծառայությունների ավելի բարձր մակարդակ՝ ապահովելով բազմազանություն: Ու թեև պետական և մասնավոր հատվածը քայլեր կատարում է, այնուհանդերձ, այս ոլորտը մշտապես բարելավման կարիք ունի:

**КРИСТИНЕ ТАТОСЯН**

## ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ТУРИЗМА РА

***Ключевые слова:*** *конкурентоспособность туризма, инфраструктура, опора, ценовая конкурентоспособность, отрасль экономики.*

*Согласно докладу конкурентоспособности туризма РА, Армения несколько лет непрерывно улучшает свои позиции и продолжает осуществлять активную политику для решения проблем в направленной сфере. И для того, чтобы быть на*

*туристической арене более конкурентоспособным, необходимо прояснить проблемы и обработать методы их решения. Нужно развивать инфраструктуры, улучшать дороги, культурно-исторические памятники и особо охраняемые природные территории обеспечивать необходимой туристической инфраструктурой и более эффективно использовать их существование. В частности, сложность доступности Армении, ценовая политика на рынке армянской авиации, маркетинговые пробелы и внутренняя инфраструктура, особенно плохое состояние дорог, препятствуют развитию туризма.*

KRISTINE TATOSYAN

## ISSUES OF IMPROVING THE COMPETITIVENESS OF TOURISM IN RA

*Key words:* *tourism competitiveness, infrastructure, support, price competitiveness, branch of economy.*

*According to the Tourism competitiveness report of Armenia, our country hasimproved its position for the recent years and continues to implement an active policy concerning the solution of problems that exist in the sphere of tourism. It's necessary to develop the infrastructures, improve the roads, andalso support historical-cultural monuments as well as special controlled areas of nature with appropriate infrustructures, for their better utilization. In particular, sophisticated accessibility to Armenia, adverse pricing policy in aviation, drawbacks in marketing and most importantly unfavorable road conditions hinder the development process in the field.*

**ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ**
*Տնտեսագիտություն,*
*բակալավրիատ, 2-րդ կուրս*

## ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

**Հիմնաբառեր**. *աղքատություն, ծայրահեղ աղքատություն, աղքատության խզվածքի համաթիվ, աղքատության տարածաշրջանային կառուցվածք*

*Աղքատությունը երկրի տնտեսությունը բնութագրելու հիմնական ցուցանիշներից մեկն է: Պետությունները իրենց հիմնական միջոցները նպատակաուղղում են երկրում աղքատության մակարդակի նվազեցմանը: Աղքատության հաղթահարման մի քանի միջոց կա, օրինակ՝ տրանսֆերտների վճարում, գյուղատնտեսական ծրագրերի իրականացում, արտաքին առևտրի զարգացում և այլն: ՀՀ-ում աղքատության խնդիրը մեծ է չորս մարզերում՝ Շիրակ, Տավուշ, Լոռի և Կոտայք:*

Աղքատությունը մի իրավիճակ է, որում հայտնված մարդիկ կամ հասարակությունը ունեն քիչ ֆինանսական եկամուտներ և ապրում են կյանքի ոչ բնականոն պայմաններում: Կյանքի բնականոն պայման ասելով անհրաժեշտ է հասկանալ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություն և տարբեր ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճան: